



ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՀԱՅԼԵԳՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



ԳԱԱՀԻՆՔ
ՅՊԱՐԱՆ «ՅՈՒԽԱԲԵՐ»
1926



ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԼԵԳԻՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



Գ.Ա.ՀԻՐԵ
ՏՊԱՐԱՆ ՀՅՈՒՍԱԲԵՐ
1926

ՄՆՊ

-ԳԱՀԻՐԵ-

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԼԵԳԷՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Հայ Լեզէոնական Միութեան նպատակն է .—

ա . Նիւթապէս և բարոյապէս օգնել
բոլոր հայ հաշմանդամ Լեզէոնականներուն
և ուրիշ ճակատներու վրայ կռուող անդա-
մահատ զինուորներուն և անոնց ընտա-
նիքներուն , որոնք իրենց կամքէն անկախ
պատճառներով կարօտ վիճակի ենթարկուած
են *) :

բ . Բժշկական ձրի սպասարկութիւն
անդամներուն ու անոնց ընտանեաց . (Կին
և զաւակաց միայն) :

*) Հայ Լեզէոնական Միութեան անդամ
չեղող Լեզէոնականները ու ոչ-լեզէոնական
զինուորները Միութենէն նպաստ ակնկալե-
լու չեն .

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդուած 1.— Հայ լեգէոնական Միութեան կրնան անդամակցիլ հայկական լեգէոնին մէջ ծառայող բոլոր զինուորները, նաեւ ուրիշ բանակներու մէջ ծառայող հայ զինուորները :

Յօդ. 2.— Հայ լեգէոնական Միութեան անդամակցիլ ուզող ոեւէ լեգէոնական և ոչ լեգէոնականներ պարտաւոր են իրենց զօրարձակման վկայականները ցոյց տալ, և կամ երկու անդամ ընկերներու վկայութիւնով հաստատել իրենց զինուոր ըլլալու պարագան :

Յօդ. 3.— Միութիւնը ունի՝

ա. Գործօն անդամ՝ անոնք որոնք զինուուրական ծառայութիւն ըրած են և կը լրացնեն յօդ. 1 և 2ի պայմանները:

բ. Օժանդակ անդամ՝ որոնք Միութեանս որոշ ամսավճար վճարելու յանձնառու կ'ըլլան :

գ. Պատուոյ անդամ՝ ամէն հայ անհատներ՝ որոնք Միութեան օգտակարութիւնը և ծրագիրը ընդունելով՝ նիւթական կամ բարոյական շօշափելի օժանդակութիւն ցոյց կուտան և կամ միանուագ հիսգ եղ. ոսկի նուրբատուութիւն կ'ընեն :

Յօդ. 4. — Անդամակցական տուրքը
առնուազն հինգ եղ. դահեկան է :

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ. 5. — Միութիւնս իր կեդրոնը կը
ճանչնայ Ամերիկայի Լեզեռնական Միու-
թեան կեդր . Վարչութիւնը ի Պօսթոն , որուն
բարոյական և նիւթական համարատուու-
թիւն ընելու պարտաւոր կը զգայ ինքզինքը :

Յօդ. 6. — Միութեան Շրջանային կեդ-
րոնը կը համարուի Գահիրէ՝ իրեն ենթարկե-
լով Եզիպտոսի քաղաքները , Սիւրիա և Պա-
ղեստինը , որոնք Շրջ . կեդրոնին հանդէպ
նոյն պարտաւորութեան մէջ են , ինչպէս
Գահիրէն՝ հանդէպ կեդր . Վարչութեան :

ՄԱՍՆԱՃԻԼ

Յօդ. 7. — Հինգ կամ աւելի Լեզեռնա-
կան և ոչ-լեզէռնականներ կրնան կազմել
մասնաճիւղ մը :

Յօդ. 8. — Մասնաճիւղերը պարտաւոր
են առնուազն ամիսը մէկ անգամ ժողով
գումարել . ընկերներու մեծամասնութեամբ
ժողովը օրինաւոր կը համարուի :

Յօդ. 9. — Երբ անդամական ժողով մը
իր օրինականութիւնը չի լրացներ , մասնա-
ճիւղի վարչութիւնը պարտաւոր է երեք

շաբաթուան ընթացքին երկրորդ ժողով մը
գումարել , որուն ներկայ եղող անդամնե-
րու թիւը օրինական կը համարուի :

Յօդ . 10 . — Տեղական բոլոր գործերուն
ընթացք կը տրուի մասնաճիւղի անդամական
ժողովի որոշումով : Բացառիկ պարագանե-
րու տակ , սակայն , եթէ անկարելի ըլլայ
անդամական ժողով գումարել , վարչու-
թիւնը կրնայ յարմարագոյն տնօրինութիւնը
ընել , պատասխանատու մնալով անդամական
ժողովին

Յօդ . 11 . — Ուրիշ քաղաքներէ եկող
ուելէ լեզէանական ընկեր , կրնայ մասնա-
ճիւղի ժողովներուն ներկայ գտնուիլ , որպէս
հիւր , խօրհրդակցական ձայնով միայն :

Յօդ . 12 . — Մասնաճիւղ մը երբ իր օ-
րինական թիւը կորսնցնելով կը կազմա-
լուծուի , պարտի իր հաշիւները և գոյքերը
յանձնել Շրջ . Կեղրոնին .

Յօդ . 13 . — Լուծուած մասնաճիւղի մը
անդամները կրնան միանալ ամենամօտիկ
մասնաճիւղին , իսկ այս վերջնոյն չգոյու-
թեան պարագային՝ ուղղակի Շրջանային
Կեղրոնին .

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Յօդ. 14. — Մասնաճիւղերը և Շրջ. Կեզրոնը կ'ունենան իրենց Վարչական Մարմինը բաղկացած 3—5—7 անդամներէ :

Յօդ. 15. — Վարչութիւնը կ'ունենալ իր Ա. և Բ. ատենապետները, Ա. և Բ. ատենապիրները և մէկ գանձապահ ու միւսները խորհրդական :

Յօդ. 16. — Վարչութեան պաշտօնավարութեան շրջանը մէկ տարի է . անդամերը վերընտրելի են :

Յօդ. 17. — Վարչութիւնը աշխատելու է համանման միութիւններ կազմել տալ, իրեն ենթակայ շրջաններուն մէջ և իրեն ենթարկել :

Յօդ. 18. — Ատենապետին պաշտօնն է Վարչութիւնը նիստի հրաւիրել, և հսկել ժողովի կանոնաւորութեան, ուզած ժամանակ քննել գանձապահի հաշիւները և գործառնութիւնները, և օրակարգ պատրաստել : Ատենապիրին հետ ստորագրել բոլոր պաշտօնական գրութիւններն ու նամակները . ինչպէս նաեւ հարկ եղած պարագային Վարչութիւնը բացառիկ նիստի հրաւիրել : Ատենապետը Միութիւնը կը ներկայացնէ գանազան պաշտօնական անձանց ու մարտ

միններու քով . Իր բացակայութեան՝ Բատենապետը կը վարէ գործերը :

Յօդ . 19 . — Ատենազպիրին պաշտօնն է խմբագրել և դեկապարել Թղթակցութիւնները . Վարչութեան ժողովներու ատենագրութիւնները կանոնաւորաբար պահել և աւանդապահն ըլլալ Միութեան պաշտօնական գրութիւններուն . վաւերաթուղթերուն եւ կսիցին .

Յօդ . 20 . — Գանձապահի պաշտօնն է ամսավճարները գանձել . Ելեւմուտքի կանոնաւոր հաշիւ պահել . Վարչութեան որոշումի համեմատ վճարումներ կատարել ու ծախքերու վերաբերեալ արգարացուցիչ թւելթերը պահել :

Յօդ . 21 . — Վարչութիւնը մնծամասնութիւնը կորսնցուցած պարագային լուծուած կր համարուի և ընդհ . Ժողով գումարելով նորը կ'ընտրուի . իսկ մէկ կամ երկու . երեք անդամներու պակասութեան պարագային . ընդհ . Ժողովէն կը խնդրէ առնօց տեղո նորեր ընտրել :

Յօդ . 22 . — Ոչ ոք կրնայ Վարչութեան անդամակցիլ . եթէ առնուազն վեց ամիսէ ի գեր գործոն անդամ չէ :

Յօդ . 23 . — Վարչութիւնը կարելի ե-

դածին չափ յաճախ ժողով կը գումարէ և
առնուազն ամիսը երկու անգամ։ Անհրա-
ժեշտութեան պարագային, Վարչութիւնը
նիստի կը հրաւիրուի Առենապետի կողմէ։
Այս վերջին պարագային, ժողովը միայն
Ատենապետի կողմէ ներկայացուած օրա-
կարգի շուրջ կրնայ վիճաբանիլ։

Յօդ. 24. — Վարչութեան որոշումները
վաւերական են, մեծամասնութեամբ տրր-
ուած պարագային։

Յօդ. 25. — Վարչութիւնը պարտաւոր
է իր յարմար տեսած զանազան պատուա-
ւոր միջոցներու գիմելով, ծախքերը գոցող
հասոյթներ ապահովել։

Յօդ. 26. — Գանձապահի քով 100 ե.
դ. գումար մը միայն կը մնայ ընթացիկ
ծախքերը հոգալու համար։ մնացածը դրա-
մատան մը մէջ և կամ Վարչութեան յար-
մար դատած տեղ մը ի պահ կը դրուի Ատե-
տենապետի և գանձապահի անուամբ։ վեր-
ջին պարագային Վարչութիւնը հաւաքաբար-
պատասխանատու է կորուստին։

Յօդ. 27. — Ամէն մի Վարչութիւն իր
գործունէութեան հաշուեցուցակը կը ներ-
կայացնէ ընդէ. ժողովին, գործէ քաշուելէ
առաջ, և ընդէ. ժողովը իր մէջէն կ'ընտրէ

երեք հոգինոց հաշուեքննիչ մարմին մը՝
հաշիւները քննելու և տեղեկագիր բերելու
համար :

ՀՆԴՀԱՆՈՒԻՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 28. — Հնդհ. Ժողովը՝ կազմուած
ամբողջ Ընկերներու ներկայութեամբ՝ ամե-
նալայն իրաւասութիւն ունի որոշումներ
կայացնել, հաշիւները քննել ու վաւերա-
ցընել և Միութեան նպատակին ծառայող
թելադրութիւններ Ընել, իր որոշումները
պարտաւորիչ են Միութեան բոլոր անդամ-
ններուն համար :

Յօդ. 29. — Հնդհ. Ժողովին կը մաս-
նակցին բոլոր գործօն անդամները. բացա-
կաները իրաւունք ունին իրենց ձայնը տալ
ուրիշի մը՝ գրաւոր յայտարարութեամբ:

Յօդ. 30. — Ոչ ոք իրաւունք ունի
գործօն անդամներու 2/5էն աւելիի ձայնը
ներկայացնել: Ամէն մէկ գործօն անդամ
մէկ ձայն միայն ունի*) .

Յօդ. 31. — Հնդհ. Ժողովը, անփոփո-

*) Պատօւոյ և օժանդակ անդամները
իրաւունք ունին ընդհ. Ժողովին ներկայ
գտնուելու, սակայն, առանց ձայնի իրա-
ւունքի :

խելիօրէն ամէն ամսու առաջին կիրակին
կը գումարուի :

Յօդ. 32. — Վարչութիւնը իրաւունք
ունի ընդհ. ժողովը արտակարգ նիստի
հրաւիրել . ընդհ. ժողով կը հրաւիրուի նաեւ
երբ անդամներու մէկ երրորդը կը պահանջէ
զայն Վարչութենէն և կամ Ընդհ. ժողովի
դիւանէն :

Յօդ. 32. — Գործօն անդամներու կող-
մէ առաջարկուելիք ոեւէ խնդիր, ամսագրլ-
խէն առնուազն ութը օր առաջ Վարչութեան
պէտք է երթայ, որ Վարչութիւնը կարողա-
նայ ներկայացնել ընդհ. ժողովին :

Յօդ. 34. — Ընդհ. ժողովը իր մէջէն
կ'ընտրէ դիւանը՝ բաղկացեալ 2 ատենապե-
աէ և 2 ատենազպիրէ (գաղտնի քուէար-
կութեամբ), որոնք կը կառավարեն ընդհ.
ժողովը, և ի հարկին յօդ. 31ի տրամադ-
րութեան համաձայն ժողովը կը գումարէ :

Յօդ. 35. — Երկու քուէախոյզներ
կ'ընտրուին ներկայ գործօն անդամներէն :

Յօդ. 36. — Ընդհ. ժողովի ատենապր-
րութիւնը կ'արձանագրուի մասնաւոր աօ-
մարի մը մէջ և կը ստորագրուին ատենա-
պետին, ատենազպիրին և քուէխոյզներու
կողմէ :

Յօդ. 37. — Որոշումները կը արուին

Ներկայ անդամներու և ներկայացուած ձայներու մեծամասնութեամբ . ընտրութիւնները գաղտնի քուէարկութեամբ կը կատարուին :

Յօդ . 38 . — Ընդհ . Ժողովը Վարչութեան համարատուութիւնը լսելէ վերջ , պէտք եղած ցուցումները կ'ընէ և ի հարկին Վարչութեան պակաս անդամները կը լրացնէ :

Յօդ . 39 . — Ընդհ . Ժողովի որոշումները վաւերական են՝ եթէ անդամներու 2/3ը ներկայ է :

Մեծամասնութեան չգոյութեան պարագային երկրորդ ժողով մը կը հրաւիրուի , և այս անդամ ինչ ալ ըլլալ ներկաներու կամ ներկայացուած ձայներու թիւը , ժողովը օրինական կը համարուի :

ԶԱՆԱԶԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ . 40 . — Քաղաքական , դաւանական և կուսակցական հարցեր Միութեանս նպատակէն հեռու ըլլալով՝ ընդհ . Ժողովներու և հաւաքոյթներու մէջ ատոնց մասին վիճաբանիլ՝ բացարձակապէս արգիլուած է :

Յօդ . 41 . — Այն ամէն անդամ ընկերները՝ որոնք կը փափաքին Միութեանս շա-

հերը շօշափող հարցերու շուրջ մամուլի մի-
ջոցաւ արտայայտուիլ՝ պարտաւոր են ի-
րենց յօդուածները հրատարակութենէ ա-
ռաջ Վարչութեան զրեել, որը ազատ է ար-
տօնել հրատարակութիւնը կամ ոչ, հակա-
ռակ պարագային սոյն յօդուածին հակասող
ընկերները Վարչութեան յարմար դատած
պատիժին կ'ենթարկուին, և որը մինչեւ
արտաքսում կրնայ յանգիլ.

Յօդ. 42. — Վարչութիւնը կրնայ՝ ոեւէ
անհատ որ կը ֆափաքի Միութեան ծրագիր-
կանոնագիրը ընդունելով անդամակցիլ՝ իբր
գործօն, օժանդակ կամ պատուոյ անդամ
ընդունիլ, եթէ պէտք եղած քննութեան
արդիւնքը նպաստաւոր ըլլայ, իսկ հակա-
ռակ պարագային, եթէ անդամակցութիւնը
մերժէ՝ պարտաւոր է ընդհ. ժողովին տա-
նելով անոր հաւանութեան ենթարկել.

ՊԱՏԺԱԿԱՆ

Յօդ. 43. — Այն բոլոր անդամները, ո-
քոնք առանց բանաւոր պատճառի՝ երեք ա-
միս անդամակնար չեն վճարեր՝ անդամակ-
ցութենէ կը դադրին:

Յօդ. 44. — Վարչութիւնը ոեւէ անդա-
մի՝ ըլլայ գործով, ըլլայ խօսքով, ունեցած

անպատռւաբեր և յոռի ընթացքին պատճառվ , եթէ արտաքսումը յարմար կը դատէ , պարտաւոր է պէտք եղած փաստերով միասին խնդիրը ընդհ . ժողովի նկատառութեան և օրոշումին ենթարկել :

Յօդ . 45 . — Այն բոլոր լեզէոնականները , սրոնք տեղս կը գտնուին և առանց բանաւոր պատճառի միութեանս չեն մասնակցած , դիմումի պարագային Վարչութեան կողմէ որոշուած գումարը վճարելէ յետոյ պիտի ընդունուին .

ՊԱՏԴԱՄԱՀՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ . 46 . — Միութիւնս , պատգամաւորական ժողովի գումարումը անհրաժեշտ կը համարէ այն պարագային՝ երբ արտաքին պայմանները կը պարտադրեն և կամ մասնաճիւղերու մեծամասնութիւնը կը պահանջէ : Այն ատեն պատգամաւորական ժողովի հաւաքման ձեւը և օրակարգը կը պարաստուի Շըջ . Կեդր . Վարչութեան կողմէ :

ՅՈՒՏ

Յօդ . 47 . — Միութեանս հասոյթին առնուազն 20 առ հարիւրը կը վերապահուի հաշմանդամ լեզէոնականներուն , ու այդ

գումարը Յ ամիսը անգամ մը պիտի դրկուի
կեղը . Վարչութեան՝ այդ նպատակին յատ-
կացուելու համար :

Յօդ. 48.— Հաշմանդամ ընկերներու
բլլալիք նիւթական օգնութիւնը պիտի կա-
տարուի , կեղը . Վարչութեան խողովակով
ու միջոցով :

ՀՈՒԾՈՒՄ

Յօդ. 49.— Միութեանս լուծման պա-
րագային պատրաստ գրամը և գոյքերը կը-
փոխանցուին կեղը . Վարչութեան , իսկ ո-
նոր չգոյութեան պարագային , Հայկական-
կառավարութեան .

ՅԱԻԵԼՈՒՄ

Յօդ. 50.— Սոյն կանոնագիրը կրնայ-
ֆոխուիլ , ընդհանուր անդամներու 2)Յի պա-
հանջումով և ներկայութեամբ :

